

լան ի Թրակիա: Հետեւաբար բոլոր խնդիրը կ'ամփոփուի միայն լեզուին մէջ, որ է՝ իբր թէ փոխազատեց և Թրակացւոց լեզուն աւրիական ցեղին պատկանի: Սակայն, միւս կողմանէ, երբէք ապացուցուած չէ այդ խնդիրը, և ընդհակառակն բոլոր Հին աւանդութիւններ կը հաւաստեն միզ՝ թէ փոխազատեց փոքր Ասիոյ ամենահին ժողովուրդն են, Հայոց մէկ տերունիքը և գաղթականութիւնը, որով իրենց լեզուն ալ՝ Հայերէնին նման՝ ոչ արեւական և ոչ սեմական ցեղին կը պատկանի:



ԱՆԿԻԻՐԻԱ



ԱՆԿԻԻՐԻԱ կամ ԷՆԿԻԻՐԻԱ. Գղ. ANCYRE. կամ ANGORA. Թ. انقرة. — Հնութեամբն և բազմադիմի զէպքերովն ի հունց մինչև ցարզ

երեւելի հանդիսացած է քաղաքս, որ երբեմն մայրաքաղաք էր Գաղատիոյ, և այժմ՝ զլիսաւոր և վաճառական քաղաք համանուն վիլայէթի: Յոյժ հոշակ ունեցած է քաղաքս փոխգիւղի անկախութեան ժամանակ, հիմնադրուած էր իսկ Բաբելոնի քաղաքէն առաջ: Մինչև ցարզ ծանօթ Հին մատենագրաց տուած տեղեկութիւնք, համարուած են լոկ առասպելախառն աւանդութիւններ: Պաւսանիաս կ'ըսէ, թէ Անկիւրիոյ հիմնադիրն եղած է Կորդոսի որդին՝ փոխգիւղի Միդաս թագաւորը, որ այստեղ Արամազդայ համար կառուցութիւնք տաճարի մը հիմն փորել տուած ժամանակ, զտաւ խարխիւ մը, և այդ պատճառաւ քաղաքս անուանեւ ի խարխիս (յն. Ἀγκυρα) որ ըստ մեր հնչման եզեր է Անկիւրա և Անկիւրիա: Ապոլլոնիոս կարիացի պատմագիրն ալ, այս խարխիւն կը համարի մին այն խարխիւններէն, զորս Հին Գաղղիացիք կամ Կեդաք բերած էին, Պտղոմէոսէն զրկուած եգիպտական նաւատորմիլին զէմ իրենց ըրած յաղ-



Անկիւրիոյ տեսարան:

թութեան իրեն նշանակ: Սակայն այս ստուգաբանութիւնն ստեղծագործեալ կը թուի, որովհետեւ քաղաքս նոյն անունն ունէր նաեւ Մեծիկն Աղեքսանդրի ժամանակ, որ Անկիւրիոյ գիմացը կեցաւ, Պափազունիացւոց պատգամաւորները ընդունելու համար: Աւելորդ կը համարինք, յիշել աստ քաղաքիս ծագ-

ման մասին պատմուած ուրիշ դրոյցներ: Հռովմէական տիրապետութենէն առաջ Անկիւրիա կառուցուած էր այժմեան բերդատեղւոյն վրայ: Հռովմայեցիք զայն ընդարձակեցին և բերդի պարիսպներն երկնցուցին մինչև վաշտը: Պատմական անթիւ զէպքեր ունեցած է քաղաքս ի հունիմ, որոնք մեզ

սանդղով մ'ալ կ'եննուի զիմացի բլրան վրայ՝
Քաղաքացիք բերդէն մինչեւ գետակը տանող
գետնափորը կ'անուանեն Մուշտաք, որ տն-
շուշտ պաշարման ժամանակ գետակէն ջուր
առնելու կը ծառայէր. իսկ զիմացի բլրան
վրայ ծածուկ ճանապարհով կ'եննէին զԹշնա-
մին զիտելու համար: Տիգրիի քաշ կը կո-
շուի բերդէն զուրս գտնուող բոլորշի բայց
ոչ միակտուր քար մը, քառակուսի պա-
տուանդանով, որոյ վրայ, ըստ ծերոց, ի
հնումն կար լատին արձանագրութիւն: Քա-

ղաքէն զուրս թրքաց գոռներու մօտ կայ
անծանօթ հին աւերակ մը Խօղռն տուփար
կոչուած. ստուար որմնոց զանազան մասունք
են, որոց մէջ կայ կամարակապ ճանապարհ
և ջրոյ աղւզաններ. ըստ ոմանց բաղնիք կը
համարուի: Աստուծոյ տունն կը կոչուի ի հնուց
մնացած զաղանտմարտի վայրը, որ կը զբա-
նուի բերդէն զուրս. ունի քարակերտ ամուր
սենեակներ, որոնք տեղ տեղ աւերած են
և ի վերջոյ հին շէնքերուն հետ միացուցած
կառուցած են նոր սենեակներ, և կը զօրծ-



Առկիւրիոյ հայկական թաղի մէկ մասը:

ածուին իբրեւ ընթերցարան մուլլայից: Այս
տեղ շատ են հին արձանագրութիւնք, սա-
կայն մեծաւ մասամբ խանգարուած:

Անկիրիա որչափ որ ի հեռուստ հրա-
պուրիչ երեւոյթ մ'ունի, այնչափ ալ տխուր
է իւր տեսքն ի մօտոյ, բաց ի քանի մը
նորոգ կառուցուած սպիտակագոյն շէնքերէ
և մինարէններով մզկիթներէ, ճաշցած ամբող-
ջութիւնն, այրուած քաղաքի մը նմանութիւն
ունի. փողոցներն նեղ են, աղտոտ և ծուռ
ու մուռ. տներն ընդհանրապէս շինուած են,

արեւու տակ չորցած յարդախառն շաղախով
և այդ պատճառաւ սեւ ու տխուր տեսք ու-
նին: Քաղաքս այժմ ունի առատ ըմպելի
ջուր, զոր ջրանցքներով բերած են, 20 հա-
զարամետր հեռուէն վազող էջմա-սառ վտա-
կէն. 1890 տարւոյ ապրիլի 25ին այդ նոր
ջրանցքներու բացման առթիւ քաղաքական
մեծ հանդէս կատարեցին:

Դարուս (ԺԹ) սկիզբը Անկիրիոյ բնակ-
չաց թիւն կը հասնէր 40էն 50000ի, իսկ
այժմ վերջին վիճակագրութեանց համեմատ

ունի 30էն 35000 բնակիչ, Մեծամասնութիւնը կը կազմեն թուրքը, որոնք մեծաւ մասով կը զբաղին պետական գործերով կան նաեւ երկրագործը և անասնադարմանը, ինչպէս նաեւ արհեստաւորը: Ունին 18 մզկիթ՝ շատերը աւերակ միճակի մէջ, քաղաքի մօտ երկու զինուորանոց մին հնձեղագորաց, միւսն հետեւակաց, այժմ կը կառուցանեն նաեւ ընդարձակ հիւանդանոց մը, ամէն ազգաց ազգատաց համար: Բազմութեան կոզմանէ երկրորդ կու գան Հայ կաթողիկէայք, որոց թիւն կը համարուի 9000էն 10000, և 1850 թուականէն ի վեր ունեցած են եպիսկոպոս առաջնորդներ, որոց մէջ իր վարուէն և գործօք հոգակաւոր հանդիսացած է Գեորգի Անտոն Եփրեմեան (1850—1862), որուն դարմանն կը գտնուի մայր եկեղեցւոյ աւազ խորանի կոնակը և ունի արձանադրութիւն: Նոյն բազմամաստակ եպիսկոպոսի օրով բացուած կղերանոցն այժմ փակուած կը լիայ: 1861ին Գեորգ փերոյ գաղղիացի ուղեւորն, մեծ գովեստիւր կը խօսի կղերանոցիս վրայ, յորում կանոնաւոր գասախօսութիւնք կ'ըլլային զանազան լեզուաց, և որուն աշուկարօք առաջինն եղան ամբողջ քաղաքի հայ հասարակութեան մէջ հայերէն լեզուն մշակոյն և խօսողն, վասն զի մինչեւ նոյն ժամանակ Անկիւրիոյ բոլոր Հայք կը խօսէին միայն թուրքերէն: Ունին չորս եկեղեցի, Ս. Աստաճածածիճ՝ է մայր եկեղեցին, որոյ մօտ կը գտնուի վայելուչ առաջնորդարանը. միւս եկեղեցիներն են Ս. Կղեմէս, Փրկիչ և Ս. Պետրոս Պօղոս: Այս եկեղեցեաց ոմանց մօտ կը գտնուին տարրական դպրոցներ. կանխաւ կար նաեւ գաղղիացի Եւգենիոս Պօրէն հաստատուած լեզուաց դպրոց մը: 1883—84 տարիներու մէջ արժանընտիր Յովսէփ Գրքմըզեան բահանայի ջանիւր բացուցեալ Սրբտիմ Բիւրախի կամ Բառասնից կոչուած վարժարան մը, որ այժմ փակուած է, և որուն ի մօտոյ բացուին կը մաղթենք Գեորգի Յովհաննիսեանի (1887—1899) առաջնորդութեան ժամանակ, Անկիւրիոյ մէջ հաստատուեցան գաղղիացի Արեւելեան դպրոցաց Եղբարք, և այս պատճառաւ միւս զբաղողներն զոցուեցաւ և բացուեցաւ միայն

այդ գաղղիացւոց դպրոցն, որուն վրայ շատ տեղի մնաց ժողովրդեան մեծ մասն, որոնք կ'ուզէին զատ ազգային վարժարաններ ունենալ, և իրենց նախնեաց լեզուն ուսուցանել սերնդոց: Անկիւրիոյ մէջ գտնուող ձեռնհրէց անձանց և զիտուն հոգեւորականաց ջանիւր կը յուսացուի, որ ի մօտոյ բացուին վերստին ազգային վարժարաններ: Հոս հաստատուած են նաեւ հայազգի Քորթ Անարատ Յղոքեան, որը կը զբաղին աղջկանց դաստիարակութեամբ: Կաթողիկէայ Հայք մեծաւ մասամբ հարուստ են, և աղքատք սուկաւթիւ: ունին մօտ 30էն մինչեւ 40 քահանաներ, զորս մեծապէս կը յարգեն ու կը պատուեն:

Լուսաւորչական Հայք խառն կը բնակին առանձին թաղի մէջ, կաթողիկէայ Հայոց հետ միասին, որոց թիւն կը համարուի 3000 մեծամասնութիւնը աղքատ են և հարուստք սակաւաթիւ: Ի հնուքն աւելի բազմաթիւ եղած են և ունէին եօթը եկեղեցիներ որոց անուանք են. Ս. Նշան, Ս. Սարգիս, Ս. Ստեփանոս, Ս. Կղեմէս կամ Ս. Խաչ, Ս. Լուսաւորիչ, Բառասնից մանկունք և Ս. Հոգի: Այժմ այս եկեղեցիներէն երեքը միայն կայ, իսկ միւս չորսն ոմանք հիմա յատակ եղած են և իրենց նախկին պաշտօնութեան հաղի աղօտ նշմարանք մը թողուցած, և ոմանք կաթողիկէայ Հայոց ձեռն անցած: Վերոյիշեալ երեք եկեղեցիներէն ալ միայն երկուք կը գործածուին Ս. Նշան՝ որ բաւական արծաթեղէն անօթներ ունի, և Ս. Խաչ՝ որ կառուցուած է բերդի մէջ: Այս եկեղեցւոյ արեւմտեան կողմը գտնուելով Ս. Կղեմայ հայրապետի գերեզմանը, կաթողիկէ Հայք եւս կը յաճախեն ուխտի. սոյն գերեզմանի վրայ գեղեցկաշէն զմբէթ մը կայ և շրջապատուած է երկաթեայ գեղեցիկ վանդակներով. հոս կան նաեւ ուրիշ սրբոց գերեզմաններ:

Լուսաւորչական Հայոց սեփականութիւն է, Անկիւրիոյ հիւսիսային կողմը՝ գրեթէ կէս ժամ հեռու դաշտի մէջ գտնուող Ս. Աստուածածնի վանքը, յորում կը նստի քահանայապետը, երկու կամ երեք վարդապետներով: Ունի 24 սենեակ և երեք

զուտ, մին ուխտաւորաց, ուրիշ մը միաբա-
նից և երրորդ մը ոչնչարաց և արջառոց հա-
մար: Բոլորչի և զմբէթաւոր եկեղեցին հիմ-
նուած կը համարուի Ս. Պողոս առաքեալէն,
կամ լաւ եւս ոմանց ըսածին համեմատ, ի
հնումն մեհեան եղած է, զոր ապա առա-
քեալը սրբեր և օծեր է տաճար Աստուծոյ.
և այդ կարծիքը հաւանական եւս է, վասն
զի զմբէթը խորշխորշ յօրինուած է, կոոց
արձաններու համար: Բայց ինչպէս որ ալ
ըլլայ, տաճարս ոչ այնչափ մեծագործու-
թեամբ ողջափ հնուլթեամբն պատկառելի է:
Ունի չինգ խորան, արեւելեան կողմն է ա-
ւագ խորանը, և անոր աջ ու ձախ կողմերը
երկերկու խորան: Աւագ խորանը որ եկե-
ղեցւոյ յատակէն 4,20 մետր բարձր է, շի-



ԱՍԿԻՐԻՈՅ Ս. Աստուածածնի վանքը:

նուած է ամբողջապէս Կոտայնայի սպիտակ
և կապոյտ խեցիով, ինչպէս նաեւ պատերն
և յատակը, որոնց շինութեան թուականն
ըստ Հեմիրեի 1174 (= 1758) փորա-
գրուած է սեան մը վրայ: Եկեղեցւոյ մէջ,
ինչպէս նաեւ դպիթը կը գտնուին բաւական
թուով պատկերներ իտալացի և տեղացի հե-
ղինականքէ նկարուած: Իտալական նկարնե-
րէն միոյն վրայ կայ իտալերէն յիշատակա-
րան մը, 1774 թուականաւ և Հոովմ բա-
ղաքին անունը: Այս պատկերներէն ոմանք
ըստ ասից տեղական քահանայից, բերուած
են Հոովմէն և Վանացս մէջ կայ բաւական
ընդարձակ առաջնորդարան մը, որուն մէկ
փոքրիկ սենեկին մէջ կը պահուին եկեղեցւոյ
սուրբ անօթները, գաւազաններ և ծանրա-

զին զգեստները: Առաջնորդարանին մէջ կայ
նաեւ թանգարան մը, հին և նոր գրքերու
հաւաքածոյի մը: Վանքս ունի առատ եւ
կամուտ, հաստատուն կալուածներ, արմտիք
ցանելու արտեր, թթնեւոյ և մրդեղինաց
պարտէզներ և այլիներ. ունի նաեւ կովեր,
եղներ և ոչխարներ. ասոնցմէ զատ ուխտա-
ւորներէն ալ բաւական նուէրներ կու գան:
Սակայն ցաւալի է ըսելն, թէ այսչափ ա-
ռատ եկամուտներով հանդերձ, վանքն չու-
նի ոչ կանոնաւոր դպրոց և ոչ գիտուն հո-
գեւորականներ պատրաստելու կղերանոց.
միայն վերջին աղետալի դպրեղէն հարկա-
ւորուած բացած են այժմ որքանոց մը: Ան-
կիրիոյ պարծառք և Միաբանութեանս բազ-
մարդին և որբակեաց անպաշտներէն մին՝ Հ.
Մկրտիչ Վ. Ազերեան, իր Ստեփանոս եղ-
բորմէն առնելով բերած է ի Ս. Ղազար Ան-
կիրիոյ Ս. Աստուածածնի վանաց ձեռագիր
յիշատակագիր մը 152 էջերով: Այս յի-
շատակագրի մեծ մասն բռնած են, նոյն
վանաց նուիրաւուաց անուանք և նուիրաց
քանակն և նկարագիրն: Պատմական և կա-
րեւոր կտոր մ'ալ կայ, որով կը յայտնուի,
թէ, վանքս հաստատողն եղած է ոմն ի Հա-
յոց Տէր Ներսէս, զոր ապա հայկական
ՋԺԲ (= 1469) թուին, իւր հարազատ
եղբայրը Տէր Նիկողայոս արքեպիսկոպոս՝
աւելի կարգաւորած և շէնցուցած է: Թեեւ
վանացս վրայ գրելու շատ նիւթ կայ, ու-
րոնցմով միշեւ անգամ կարելի է հատորիկ
մը ձեւացնել, սակայն բառաբոլորս ոճէն չչե-
ղելով՝ այսչափով բաւականանանք: — Ան-
կիրիոյ Հայոց սակաւաթիւ մասի մը մէջ
մուտ գործած է բողոքականութիւնն, ասոնց
թիւն հազիւ կը հասնի 150ի, որք ունին
ժողովարան մը:

Քաղաքիս Յոյնը կը բնակին առանձին
թաղի մէջ և կը հաշոււելին 1600 հոգի. ու-
նին երկու եկեղեցիներ, Ս. Գեորգ և Ս.
Երարդադարեան, և աղջկանց և տղայոց դպրոց-
ներ, որոց շնորհիւ անցելոյն մէջ իրենց
կորսնցուցած մայրենի լեզուին՝ այժմ սկսած
են վերստին ձեռք բերել. ընդհանրապէս
վաճառականութեամբ կը զբաղին և նիւթա-
կան լաւ վիճակի մէջ կը գտնուին: Իսկ

Հրեայք 400 հոգի են առանձին թաղի մը մէջ, ունին Սինակոկ մը և մայրենի լեզու, նին կորոնցուցած չեն երեքը:

Որով չի գիտցուիթ թէ Բր թուականին պաղթած և հաստատուած են աստ Հայք. բայց ըստ աւանդութեան կը կարծուի որ այս գաղութի մէկ մասն եկած է Պարսկա-Հայաստանէն ժ.Ձր՝ դարու առաջին բառուրդին մէջ: Թէեւ մէջերնին կրօնական բաժանմանը կան, սակայն իրենց բարքն, սովորութիւնը և ընդհանուր յատկութիւնը իրարմէ ամենեւին չեն տարբերի: Հեզահամարյր են, համարձակ, հաստատամիտ, աշխատասեր և ամէն բանի աշողակ՝ մանաւանդ տնետորը. որով քիչ ժամանակի մէջ շատ առաջ կ'երթան և կը հարստանան, քաղաքէն աւելի օտարութեան մէջ: Մեծամեծաց առջեւ արեւելեան անվեհեր համարձակութեամբ, յոյժ անուանի են Անկիւրացիք, որով իրենց գրեւոր պատկանելի կ'ընեն ծանր բարքովնին և անշիփթ ու պատրաստ պատասխաններով: Ժամանակաւ փաշայ մը վախնալով որ չըլլայ թէ ծածուկ քրիստոնեայք իրենց դէմ ապստամբին, խտուի արշիլերէ և Հայ լեզուի գործածութիւնն, և անոր հետեւանը դեռ մինչեւ ցարկ հայերէնը տիրացած չէ տեղւոյս ազգայնոց մէջ, թէպէտեւ մեծ յառաջագիմութիւն կայ և նորաձոր ջանքեր ալ պակաս չեն. սրամիտ են և զիրար կ'ուսանին օտար լեզուներ: Սաստիկ հետաքրքիր են, մանաւանդ կիսայայ, քաղաքն եկող պացող օտարականները գիտելու: Շատ կ'իրատես են, և կը վշտանան եթէ չկարենան մէկը հիւրասիրել: Ամառնային եղանակին և մանաւանդ կ'իծայ ժամանակ, քաղաքէն դուրս գտնուող անուանի այգիները կ'երթան և շատ օրեր հոն ուրախութեամբ և զուարճութեամբ կ'անցնեն. իսկ ձմեռն սովորութիւն ունին գիշերները իրարու տուն այցելութեան կամ նստի (օրոշարմա) կ'երթան: Այցելուները կը պատուասիրեն նախ ծախիտի գլանիկներով, որ վերջը եւս կը շարունակուի, յետոյ սեխի կուտով, որ շատ յարգի է Անկիւրիոյ մէջ և ամէն տուն անպատճառ պիտի գտնուի. վերջը կու գայ պատուական օղին. և ապա ազգի ազգի մրցե-

ղէններէ և ուտելիքներէ վերջը, ու ժամանակ կը մեկնին տուներնին, կրկին գիրար հրաւիրելով նոյնպիսի դուարթ գիշերներ անցնելու:

Անկիւրիոյ արեւելեան և հիւսիսային կողմերն թրջելով կանցնի համանուն գետակն, որով վրայ ձգուած են գտնազան կամարշէներ, և յորոց նշանաւոր է ինի քարաշէն: Այս գետակս քաղաքէն հիւսիսային կողմէն քիչ մը տեղ դէպ ի հարաւային արեւմուտք իջնելով՝ ապա կը շեղի արեւմտեան հիւսիս, կոչուելով Թապադիսանայի գետակ, և կը թափի Չաքարիայ գետոյն մէջ: Քաղաքիս կառավարութեան պալատը նշանաւոր է մեծութեամբն, յորում թուրք լեզուի ստարանի եւս կայ. շուկայն ձեւացած է երեք հազարի չափ խանութներէ. կան 12 բաղնիք, 21 խան, յորոց ոմանք խիստ հին. պեղեւտեմ մը և գետակի վրայ բազմաթիւ ջրաղացներ: Անկիւրիոյ շրջակայից և վիլայէթի բերքերն են. հոյակաւած այժամազն, բուրդ, սպիտակ գունդիւն և քաղցր համովն անուանի մեղր, ցորեն և ուրիշ արմատք, խէժ, խաշիւաշ, ալամահիթի (ճէհիթ), խաղող, և ուրիշ տեսակ տեսակ գեղեցիկ և անուշահամ մրգեղէններ. և այն: Կենդանիներէն անուանի են երկայն մազոտ այծերն, բրդոտ կատունքն և շներն:

Քանի որ Անգլիացիք՝ Գլխոյ գաղթականութեան կլիմային սկսան վարժեցնել Անկիւրիոյ այծերը, բաւական փութեցաւ քաղաքէն վաճառականութիւնն, վասն զի իւր գլխաւոր և հարստութեան աղբիւր վաճառեցաւ: Սակայն այսուհանդերձ տակաւին շատ թուով կը դարմանեն այս կենդանիներէն և ամէն տարի, բաւական մուտք մը կը քոյանայ: Տարուան մէջ միջին հաշուով կ'արտածուին հետեւեալ նիւթերէն.


Պրօն կամ այժամազ	1 500 000 քէլէ
Բուրդ	2 000 000 »
Այժամազ հասարակ	230 000 »
Բամբակ	60 000 »
Գազի խէժ	180 000 »
Դեղին հում	600 000 »
Ծխախոտ	123 000 »
Խաշիւաշ	40 000 »

Բրիճձ	800 000	ՔԻԷ
Կարազ	300 000	»
Պտուղներ	3 000 000	»
Խաղաղ	7 000 000	»

Կարտածեն նաեւ ամէն տարի գրելով 100 000 ոչխար, 200 000 այծու մորթ, 20000 եզան մորթ: Արմտեաց արտածու թիւնն կը համարուի 4 000 000 քիլէ: Պաշտօնական տեղեկութեան մը համեմատ 1893ին արտածուած է 12,500 000 ֆրանկէն աւելի արժողութեամբ ապրանք: Ներմուծուած ապրանքներու արժէքն ասիլ աւելի է. նիւթերն են, շաքար, սուրճ, բամբակեղէն և բրդեղէն լավեղէնք, եւրոպական չուխայ, ֆէս, երկաթ, պողպատ, զանազան մետաղք, քարիւղ, և այլն: Անկիրիոյ աւրուեստական արտադրութեանց մէջ ժամանակաւ մեծ շահու զուտ էր պրօնի կամ թիֆլիսի պատրաստութիւնն, ինչպէս նաեւ տեղական զործուած շալիներն. այս երկու արհեստներն եւս այժմ ինկած են: Նշանաւոր է Անկիրիոյ խճուղն (սուճուղ) և ապուխտն (պաստորմա). անուանի են նաեւ գինին և օղին:

Անկիրիան այժմ սկսելով կապուիլ երկաթուղւոյ գծերով Կ. Պոլսոյ և ուրիշ վաճառաշահ կեդրոններու հետ, իր վաճառական շարժումն եւս օր ըստ օրէ առաւելլու վրայ է. այս պատճառաւ կարելի է որ քաղաքն եւս զարգանայ և բարգաւաճի և մէկ խօսքով զարթնու իր արեւելեան քաղաքաց յատուկ խորունկ ճունէն: Տփղիսաբնակ ուսու լուսանկարին Երմակով, լուսանկարած է Անկիրիոյ 130էն աւելի տեսարաններն և բազմաթիւ հնութեանց լուսանկարները: — Տեղեկագր. Գաղատիոյ, 1873, 1—78: Տեղգր. Հայս. 48—52: Քիճե, Ա. 1867, էջ 257 և 247—284: Բազմավեպ, 1899, էջ 27, 137, և այլն:

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷՓՐԵՍԻԱՆ



ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԵՐԳԸ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Փ ՈՒԱԳՐՈՒԻՆՔ վայրկեան մը երևակայութեամբ Պաղեստինու խոնարհ բարձունքը, և երազելով մեր քայլերը Բեթզեհէի շրջակայ հովիտներու մէջ, փութանք զպի Մսուրը, ուր երկնի և երկրի արարիչ Աստուած մը կը հանգչի: Գիշերային թանձր ստուերաց մէջ, անըմբռնելի պայծառութիւն մը յանկարծ կը շլացնէ զմեզ, և մերձակայ բլուրներ ու ձորեր կը կրկնեն փոխի ի փոխ ներդաշնակ նուագ մը, հրեշտակային քնարներու թրթռուցներէ յառաջ եկած: Քսան զարեւ այդ գիշերն ի վեր թռան երկրիս երեսն և մենք զեռ կը լսենք այդ երգը, և որուն զեռ եւս արձագանգ կ'ըլլանք, ապագայ զարեւու զայն աւանդելով: Ամենահին յիշատակաց մին է այդ, զոր ժողոված ենք նորածին եկեղեցիին, և որ զարեւու ընծացքին, մի քանի պատիկ յաւելուածներ կամ փոփոխութիւններ կրած է միայն: — Այդ յաւելուածներն ու փոփոխութիւնք պիտի ըլլան առարկայ հետազոտութեանցս:

* *

Մոյն երգը՝ որ Յունաց ծանօթ է «Մեծ փառաբանութիւն» Μεγάλη δοξολογία աւուամբ, լատին եկեղեցւոյ մէջ մերինն նման կը կոչուի պարզապէս «Փառք ի բարձունս» Gloria in excelsis իւր առաջին բառերով. Ասորիք աւելի եւս համառատութեամբ կը գոհանան միայն առաջին **ՆԱԽԾԱԿ** (Թիշպուխթա=Փառք) բառով. և ամէն ազգեր կը միաբանին հասարակաց անուամբ մը պաւ:

1. Այսպէս կը կոչուի՝ փոքր կամ համառատ փառաբանութիւնն, որ է «Փառք Հօր» և այլն, զանազաներու համար: Ուրիշ անգամ թերեւս առիթ կ'ունենանք ասով եւս զբարեկրու: